Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Թերզյանի, Տեմիրճիպաշյանի, Արփիարյանի, Մեծարենցի ստեղծագործությունները: Սակայն վրա հասած ծանր քաղաքական իրադարձությունների պատճառով ընդհատվում է այսքան խոստումնալից նախաձեռնության իրագործումը:

Գրական այս ասուլիսները որոշ իմաստով հանրագումարի էին բերում արևմտահայ գրական շարժման տասնամյակների փորձը՝ սկսված հոգևոր վերածնության հեռանկարային ուղղությունները ճշտելու համար: Գրական այս հավաքույթների ազդակը այսպես կոչված գրական դատերն էին, որ այդ օրերին ընդունված էին արևելահայ մտավորականության միջավայրում: Այդպիսի «դատի» էր ենթարկվել մասնավորապես Շանթի «Հին աստվածները», որն էլ, ըստ էության, առիթ է դառնում ասուլիսների համար: Սակայն այս վերջինների միայն գաղափարն է ծագում արևելահայ գրական դատերի փորձից, իսկ նպատակն ու բովանդակությունը միանգամայն ինքնուրույն էին՝ պայմանավորված արևմտահայ գրական շարժման տվյալ պահի համար իրոք կենսական խնդիրներով:

Այդ գրական հավաքույթների ոգին, ինչպես առաջին ասուլիսի բացման խոսքում նկատում է Գ. Խաժակը, պետք է լիներ քննադատական անաչառությունը, այն, որ՝ «մոտենանք առաջադրված գրական գործին առնաբար, քաղաքացիական քաջությունով», իսկ նշանաբանը, նույն Գ. Խաժակի ձևակերպմամբ, այս էր. «Կեցցեն Հայ Գրականության Կենդանի Ուժերը, որոնք Հայ միտքը կը ներկայացնեն գեղեցիկ ստեղծագործությամբ»:

Ասուլիսների բուն նպատակի մասին ավելի հանգամանորեն խոսում է Հ. Ճ. Սիրունին: Նրա բացատրությամբ՝ անաչառ քննադատությանը զուգընթաց, ասուլիսները կոչված են նաև հետաքրքրություն և խանդավառություն առաջացնելու արևմտահայ գրականության գործող ուժերի շուրջը. «ալ ատեն է, որ գիտնանք ոչ միայն մեր գովեստները զսպել այնքան անտաղանդներու հասցեին, այլ նաև արժեցնել գիտնանք իսկական տաղանդը»: Դա թերևս շատ ավելի նվիրական պարտք է քննադատության համար, քան թերությունների բացահայտումն ու ձաղկումը: Այս ճշմարտությունը զանց առնող քննադատությունը վաղ թե ուշ չի կարող խուսափել պատմության դատաստանից: Բանախոսը հիշում է վաղամեռիկ Մեծարենցի օրինակը, նրա «մեկ քանի հոյակապ էջերը» «գրական ոչնչություն» հայտարարող